Միասնական ազգային քննություններ 2022

Դիմորդները գրանցում կանցնեն միայն առցանց՝ օնլայն ռեժիմով (համացանցով) Գնահատման և քննությունների ազգային կենտրոնի գրանցման կայք-էջի վրա **մարտի 1-ի ժամ 10:00-ից մինչև ապրիլի 4-ի ժամը 18:00** (**online.naec.ge**): Այս ժամանակաշրջանում դիմորդը պետք է լրացնի անձնական տվյալները, ընտրի քննական կենտրոնի տեղադրության վայրը (քաղաքը) և հանձնելիք առարկաները: Գրանցման հիմնական փուլի ժամկետի սպառումից հետո (ապրիլի 4) դիմորդները միասնական ազգային քննություններին մասնակցության գրանցում չեն կարող անցնել:

2022 թվականի ապրիլի 4-ի ժամը 18:00-ից հետո դիմորդն իրավունք չունի գրանցման դիմումի մեջ փոփոխել քննական կենտրոնի վայրը (քաղաքը):

Դիմորդը գրանցման երկրորդ փուլում՝ մինչև ապրիլի 14-ի ժամը 18:00 կարող է փոփոխել հանձնելիք առարկան (ջնջել, ավելացնել), փոխել քննության լեզուն կամ ընտրել մրցույթը (ստեղծագործական մրցափուլ): Օրինակ, եթե դիմորդն ընտրել էր մաթեմատիկա, սակայն որոշեց հանձնել պատմություն: Այս ժամանակաշրջանի ընթացքում հնարավոր կլինի փոխել ինչպես հանձնելիք առարկան, այնպես էլ քննության լեզուն (օր. ընդհանուր ունակությունների քննությունը նա որոշել էր հանձնել ադրբեջաներեն, կարող է փոխարինել ընդհանուր ունակությունների հայերեն քննությամբ և այլն): Ապրիլի 14-ից հետո դիմորդը հանձնելիք առարկաների թվարկությունում փոփոխություն մտցնել չի կարող:

Ինչ վերաբերում է կրթական ծրագրերի թվարկությանը, գրանցման հայտում կրթական ծրագրերը նշելու և փոխելու հնարավորությանը, դիմորդները կունենան միասնական ազգային քննությունների թեստի գնահատման բողոքարկման հայտի վերաբերյալ բոլոր առարկայական հանձնաժողովների կողմից ընդունված որոշումների հրապարակումից հաջորդ օրվա ժամը 18:00–ը ներառյալ: Կոնկրետ ամսաթիվը կհրապարակվի կենտրոնի կայք-էջի վրա: Գրանցումը հաջողությամբ ավարտելու դեպքում դիմորդի գրանցման էջի վրա կհայտնվեն նրա կողմից լրացված տվյալները (առարկաների թվարկությունը, քննական կենտրոնի վայրը (քաղաքը) և ընտրած կրթական ծրագրերը):

Գրանցումը հաստատող վերջնական փաստաթուղթն անհրաժեշտ է տպել/պահել, որովհետև առանց այս փաստաթուղթը ներկայացնելու՝ գրանցման կամ գրանցման տվյալների փոփոխության կապակցությամբ բողոքը կենտրոնի կողմից չի ընդունվի: Մի՛ վստահեք նշանաբառը (պարոլը) ուրիշին: Միայն դուք եք պատասխանատու գրանցման հայտում նշված տվյալների ճշգրտության և դրանում հետագայում մտցված փոփոխությունների համար:

Ինչպես պետք է անցնել գրանցում – մանրամասն հրահանգ 1. Դիմորդը գրանցման համար պետք է վճարի քննություններին մասնակցության վարձ (վճարման ձևերը նկարագրված են ստորև): 2. Դիմորդը համացանցով գրանցում անցնում է կայք էջի վրա.

www.naec.ge կամ online.naec.ge: 3. Մատնանշված հասցե մուտք գործելուց հետո դիմորդը հատուկ դաշտում ցույց է տալիս անձնական համարը, հավաքում է տրված խորհրդանշանները և սեղմում է «շարունակել» կոճակը: Այնուհետև ստուգում է անձնական համարը և շարունակում է գրանցման գործընթացը:

Եթե անձնական տեղեկատվությունը լրացնելիս՝ դիմորդը համապատասխան դաշտում գրառում է բջջային հեռախոսի համարը, նա համակարգ մտնելու անհրաժեշտ նշանաբառը (պարոլը) կարող է վերականգնել մատնանշված հեռախոսահամարի վրա կարճ տեքստային ծանուցմամբ: Բջջային հեռախոսի համարը պետք է գրառել առանց կոդի և առանց դատարկ տեղերը բացթողնելու (օր. 595XXXXX):

Եթե քննության ժամանակ դիմորդի համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ/յուրահատուկ քննական միջավայր, վերջինս այդ մասին պետք է նշի համապատասխան այունակում և առողջական վիճակի մասին համապատասխան տեղեկանք (Ձև №100) ներկայացնի գնահատման և քննությունների ազգային կենտրոն կամ ուղարկի կրթական ռեսուրս-կենտրոնից: Այս դիմորդները կարող են նաև համապատասխան փաստաթղթերը (հայտ կենտրոնի տնօրենի անունով, Անձը հաստատող վկայականի պատճեն, առողջության տեղեկանքի պատճեն) առաքել գնահատման և քննությունների էլեկտրոնային փոստի հասցեով. gancxadebebi@naec.ge **(մինչև 2022 թվականի ապրիլի 14-ը):**

Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագիրն ընտրելիս՝ դիմորդը ուշադրություն պետք է դարձնի ընդհանուր ունակության քննության լեզվին:

Անհրաժեշտ դաշտերը լրացնելուց և հանձնելիք առարկաների թվարկությունը մատնացույց անելուց հետո դիմորդը սեղմում է պահոցի կոճակը, որից հետո էկրանի վրա հայտնվում է հաղորդագրություն այն մասին, որ ինքը հաջողությամբ անցավ գրանցում, ինչպես նաև հնգանիշ կոդ, որը հետագայում պետք է կիրառի անձնական էջը մտնելիս: Այս կոդը դիմորդներին կարճ տեքստային հաղորդագրության տեսքով կառաքվի նաև գրանցվելու ժամանակ մատնանշված բջջային հեռախոսի համարի վրա:

Գրանցումն ավարտելուց հետո անհրաժեշտ է դիմորդը պահի կամ տպի իր հայտը: Գրանցման կամ գրանցման տվյալների փոփոխության հետ կապված հայցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե անձը հատուկ ծրագրից պահած կամ տպած ունի գրանցումը հավաստող փաստատթուղթ:

Դիմորդը կարող է մի քանի անգամ փոխել կրթական ծրագրերի առաջնահերթության թվարկությունը միասնական ազգային քննությունների թեստի գնահատման բողոքարկման հայտի վերաբերյալ բոլոր առարկայական հանձնաժողովների ընդունած որոշումների հրապարակումից հաջորդ օրը ներառյալ: Նա իր անձնական համարի և նշանաբառի (հնգանիշ կոդ) մատնանշմամբ մտնում է սեփական էջը, մտցնում է ցանկալի փոփոխությունները և պահում է տեղեկատվությունը: Վերոնշյալ ժամկետի լրանալուց հետո դիմորդը կրթական ծրագրերի առաջնահերթության թվարկությունը չի կարող փոխել:

Գրանցման տեսահրահանգը տեսնել հնարավոր է www.naec.ge –ի վրա:

Միասնական ազգային քննությանը մասնակցության վարձի վճարման նշանակությունում Վրաստանի քաղաքացին նշում է դիմորդի ազգանունը, անունը և անձնական համարը: Օտար երկրի քաղաքացին, նաև երկակի քաղաքացիություն ունեցող անձը, որը ցանկանում է գրանցում անցնել որպես օտար երկրի քաղաքացի, նշում է դիմորդի ազգանունը, անունը, Անձը հաստատող (կեցության) վկայական/անձնագրի սերիան և համարը (Անձնագրի սերիայի բոլոր խորհրդանշանները, լինի դա թվանշանն՞ր, թե՞ տառեր, լրացվում է իրար ետևից, առանց բացատի՝ տարածք թողնելու):

Մեկ առարկայի քննություն հանձնելու վարձը 10 լարի է: Այն վճարել կարող է ինչպես դիմորդը, այնպես էլ այլ անձնավորություն, որը վճարելիս (նշանակությունում) մատնացույց է անում դիմորդի համապատասխան տվյալները:

Վճարման հնարավոր միջոցներ և բանկային սպասարկման կոմիսիոն վճար.

- «Սաքարթվելոս բանկի» սերվիս կենտրոններով – վարձին ավելանում է սպասարկման կոմիսիոն վճար 0,5 լարի,
- epay.ge կայք-էջի վրա – վարձին ավելանում է սպասարկման կոմիսիոն վճար 1 լարի,
- «Սաքարթվելոս բանկի» ինքնասպասարկման տերմինալով – վարձին ավելանում է սպասարկման կոմիսիոն վճար 1 լարի,
- «Սաքարթվելոս բանկի» ինտեռնետբանկինգի միջոցով- ibank.ge –վարձին ավելանում է սպասարկման կոմիսիոն վճար 1 լարի,
- Կենտրոնի կայք-էջից – վարձին ավելանում է սպասարկման կոմիսիոն վճար 0,5 լարի:

Եթե դուք լրիվ միջնակարգ կրթությունը հաստատող փաստաթուղթ ստացել եք մինչև 2011 թվականը, 2022 թվականի հունիսի 20-ը ներառյալ գնահատման և քննությունների ազգային կենտրոն պետք է ներկայացնեք լրիվ միջնակարգ կրթությունը հաստատող փաստաթղթի պատճեն, իսկ տարածաշրջաններում

- կրթական ռեսուրս կենտրոններում, որոնք հետագայում ապահովում են կենտրոն դիմումների առաքումը, կառավարման միասնական ավտոմատ համակարգի (eflow) կիրառմամբ: Փաստաթղթի պատճեն նույնպես կստացվի էլեկտրոնային փոստով հետևյալ հասցեի վրա. gancxadebebi@naec.ge փաստաթղթին դիմումի հետ միասին պետք է կցված լինի Անձը հաստատող վկայականի պատճեն: Նկատի ունեցեք. կենտրոնը վերապահում է հնարավորություն, դիմորդի կողմից լրիվ միջնակարգ կրթություն ստանալու մասին տեղեկատվությունը չհայտնաբերելու դեպքում, դիմորդից պահանջել ատեստատի պատճեն ներկայացնել կենտրոն: Նման դեպքում դիմորդի քննական քարտի վրա կհայտնվի ատեստատը կենտրոն ներկայացնելու մասին պահանջ: Այդպիսով, դիմորդը ատեստատը կենտրոնում ներկայացնելու պարտավորություն ունի միայն այն դեպքում, եթե նրա քննական

քարտի վրա նշված է այդ մասին: **Նույն ժամկետում (2022 թվականի հունիսի 20-ը ներառյալ)** պետք է ներկայացնեն լրիվ միջնակարգ կրթությունը ճանաչելու փաստաթուղթ.

- դիմորդները, ովքեր լրիվ միջնակարգ կրթություն ստացել են բռնագրավված տարածքում,
- դիմորդները, ովքեր ունեն Վրաստանում իրականացված արտասահմանում ճանաչված ընդհանուր կրթական ծրագիրը հաղթահարելու արդյունքում տրված կրթությունը հաստատող փաստաթուղթ (որը հավասարեցված է լրիվ միջնակարգ կրթությունը հաստատող փաստաթղթի հետ և տալիս է կրթության հաջորդ աստիճանին ուսումը շարունակելու իրավունք), **2022 թվականի հունիսի 20-ը ներառյալ** պետք է ներկայացնեն ՀԻԻԱ կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի կողմից տրված տեղեկանք, որով հաստատվում է նրանց կողմից ավարտած, արտասահմանում ճանաչված ընդհանուր կրթական ծրագիրը Վրաստանում իրականացնելու հնարավորությունը:

Դիմորդները, ովքեր լրիվ միջնակարգ կրթություն ստացել են օտար երկրում, համապատասխան կրթությունը ճանաչելու փաստաթուղթ պետք է ներկայացնեն գնահատման և քննությունների ազգային կենտրոն մինչև **2022 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ:** Երկքաղաքացիություն ունեցող անձը, ով միասնական ազգային քննության գրանցում կանցնի որպես օտար երկրի քաղաքացի, պարտավոր է մինչև 2022 թվականի հունիսի 20-ը ներառյալ, գնահատման և քննությունների ազգային կենտրոն ներկայացնել Անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ:

Դիմորդները քննական քարտերի էլեկտրոնային տարբերակները կարող են տպել ցանկացած հասանելի համակարգչի վրա անձնական գրանցման էջից (էջ, որտեղ դիմորդը ընտրում է քննությունները, կրթական ծրագրերը, տեսնում է արդյունքները):

Արդյունքներին իրազեկվելու համար պահեք կամ հիշեք ձեր նույնականացման կոդը:

2022 թվականին քննական կենտրոններ կբացվեն. Բաթումում, Զուգդիդում, Քութաիսում, Փոթիում, Ախալցիխեում, Գորիում, Օզուրգեթում, Թբիլիսիում, Ռուսթավում, Թելավում, Խուլոյում:

Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրերին հանձնել կարող են միայն Վրաստանի քաղաքացիները: Դիմորդներին, ովքեր կգրանցվեն այս կամ այն բարձրագույն ուսումնական հաստատության վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրով սահմանված տեղերի համար, հարկ կլինի հանձնել ընդհանուր ունակություններից քննություն հայերեն կամ ադրբեջաներեն կամ աբխազական լեզու կամ օսական լեզու: Այս դիմորդներն ուսումը շարունակելու իրավունք ձեռք կբերեն վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրով, որտեղ ուսումնառությունը շարունակվում է

մեկ տարի (60 կրեդիտ): Այս ծրագիրն ավարտելուց և համապատասխան վկայագիր ստանալուց հետո, ուսանողներն առանց հավելյալ քննություն հանձնելու, իրենց ընտրությանը համապատասխան, ուսումը կշարունակեն նույն բարձրագույն ուսումնական հաստատության բակալավրիատի (4 տարի՝ 240 կրեդիտ), դիպլոմավոր ատամնաբույժի (5 տարի՝ 300 կրեդիտ), դիպլոմավոր բուժակի (6 տարի՝ 360 կրեդիտ), ուսուցչի պատրաստման ինտեգրված բակալավրային-մագիստրային կամ անասնաբուժության ինտեգրված մագիստրային կրթական ծրագրով (5 տարի՝ 300 կրեդիտ): Վրաց լեզվից նախապատրաստության ծրագրով ձեռք բերած պետական ուսումնական դրամաշնորհը անցնում է հետևյալ փուլի ֆինանսավորման համար:

Ինչպե՞ս է տրվում պետական ուսումնական դրամաշնորհ վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրերի համար:

Պետական ֆինանսավորում (100%-ի չափով) տրվում է հատուկ կամ կրթական ծրագրերին հատկացված գումարի սահմաններում, ընդհանուր ունակությունների ադրբեջաներեն կամ հայերեն լեզուներով թեստի կամ աբխազական լեզվի կամ օսական լեզվի քննության արդյունքի հիման վրա: Վարկանշային ցուցակը, քննության լեզվի համաձայն, կազմվում է ընդհանուր ունակությունների/աբխազական լեզվի/օսական լեզվի արդյունքի հիման վրա (օրինակ, նրանց համար, ովքեր հանձնել են ընդհանուր ունակությունների հայերեն թեստը, կազմվում է առանձին վարկանշային ցուցակ: Համանմանորեն կազմվում է ցուցակ նրանց համար, ովքեր հանձնել են ընդհանուր ունակությունների ադրբեջաներեն լեզվով թեստը և առանձին-առանձին նրանց համար, ովքեր հանձնել են աբխազական կամ օսական լեզուներ):